

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ա. - Մ. ՌԱՓ. ՎՐԺՐՆ - ՎԵՆԵՏԻԿ

Պարզ աւանդութեան մը համար չէր որ այս տարի եւս Մ. Ռ. Վարժարանի սաները բեմական ներկայացումներ տուին. մանաւանդ թէ տարած յաջողութիւններն և ոմանց դերասանական ձիրքերը յայտնութեան մը պէս գնահատուեցան Միւթարեան վանքիս Հայրերէն և Վենետիկեան փոքրիկ հայ գաղութէն:

Փետր. 5ին տրուեցաւ չորս արարուածով ծանր և մեծապէս բարոյական ու կրթիչ տրամը «Ֆից Հենրի կամ Խենթը»:

Հոգեբանօրէն ամենադժուար դերն էր զոր կատարեց վարժարանի Ե. դասի սաներէն՝ Լուդուիկ Պալմեան, այնքան յուզիչ արտայայտութեամբ: Նոյնքան յաջող ջաւէն Մանտիկեան ցաւագին դերով, և Անդրանիկ Գարապաճաքեան՝ ծիծաղաշարժ բացառիկ ձիրքով:

Երկրորդական դերերու մէջ ալ փայլեցան՝ Յովսէփ Աշրաֆեան, Յակոբ Քերոբեան, Սուրէն Յակոբեան, Վահան Բազարճըզեան, Առան Գասպարեան, Մամաս Գոզանլեան և Գրիգոր Կէյվէեան:

Միջնարարին՝ Մանուկ Էթմէքեան, Լուդուիկ Կիրակոսեան և Հրաչ Ապոյեան յաջող ֆրանսերէնով և լաւագոյն բեմական ձիրքերով ներկայացուցին Մուլիէրի «La Critique de l'Ecole des Femmes» խաղին Գ. տեսարանը:

Միւրուն և ախորժելի անցաւ հանրութեան՝ նաեւ «Փոքրիկ Ստախօսը» զաւեշտը, զոր ներկայացուցին յաջողութեամբ վարժարանին փոքրիկները:

Փետր. 7ին ալ տեղւոյն իտալացի հասարակութեան համար Մ. Ռ. Վարժարան

նին աշակերտութիւնը յաջողութեամբ բեմադրեց «La Quaderna di Nanni» կատակերգութիւնը՝ երեք արարուածով:

Գլխաւոր դերասաններն էին՝ Pier Alfonso Rizzo, վարժարանին իտալացի հսկիչը, և աշակերտներէն՝ Վ. Բազարճըզեան, Մ. Էթմէքեան, Հ. Ապոյեան, Յ. Աշրաֆեան, Վիկտոր Կիրակոսեան, Յակոբ Պոտիկեան:

Ապա ներկայացուցին «Goal» իտալ. զաւեշտը նոյնքան փայլուն կերպով P. A. Rizzo հսկիչը, և Հոնքարտ Փափագեան, Լ. Կիրակոսեան, Յ. Աշրաֆեան և Հ. Ապոյեան սաները, անսայթաք և գեղեցիկ իտալերէնով մը, զարմացումը շարժելով իտալացիներուն այնքան յաջողութեան համար իրենց մայրենի լեզուն մէջ:

Թէ՛ հայերէն և թէ՛ իտալերէն ներկայացումներուն մէջ խանդավառ ծափեր խլեցին սիրելի դերասանները, ծափեր՝ որոնց արժանի էին թէ՛ յաջողութեան համար և թէ՛ այնքան զոհողութեանց:

Մեր սրտեռանդն խնդակցութիւնը Տեսչութեան վաստակաւոր դաստիարակ Հայրերուն և մեր մաղթանքն և քաջալերութիւնը բոլոր դերակատար սաներուն:

Բ. - ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎՐԺՐՆ. ՍԵՒՐ - (ԲԱՐԻՋ)

Փարիզահայ գաղութին համար այլեւս հրապուրիչ աւանդութիւն մը դարձած է տարուէ տարի Բարեկենդանի շրջանին հաւաքուիլ Մուրատեան Վարժարանի տաքուկ մթնոլորտին մէջ և տեսնել ու լսել հայ պատանիները բեմին վրայ՝ իրենց բեմադրած գեղեցիկ և կրթիչ խաղերով:

Այս տարի ալ փետր. 7ին, հակառակ աննպաստ անձրեւային օդին, խուռն բազմութիւն մը փութացած էր թատերական ներկայացումներուն:

Յայտագիրը ճոխ էր. հայերէն նիւթերու հետ Յրանսերէն և իտալերէն պատկերներ ալ կային:

Գլխաւոր կտորը՝ հայերէն ողբերգութիւն մ'էր «Թորոս Բ.», հայ պատմութեան տխուր դրուագ մը՝ զոր մշակած էր վարժարանին Ուսումնապետը՝ Հ. Վահան Վ. Յովհաննէսեան. իսկ երգերը շարադրուած էին մեր նախկին աշակերտ տաղանդաւոր երգահան Գուրգէն Աւետիսեանի:

Ողբերգութեան Ա. արարը կը սկսի դաւաճանական խորհուրդով մը, որուն հետեւանքով Թորոս կը գերուի յոյներէն: Յուզիչ է տեսարանը՝ երբ գերեզմանապահ մը Թորոսի կը յանձնէ Գագիկի կուրծքի խաչը՝ կտակուած այն հերոսին՝ որ յոյներէն վրէժ լուծէր:

Բ. արարին մէջ Մարիամ հայագիկայսրուհին է որ մեծ դեր կը խաղայ՝ փրկելով կեանքը հայ իշխաններուն, որոնց հետ և Թորոսին:

Գ. արարին մէջ կ'երեւի Ս. Ներսէս Լամբրոնացին. ապա անոր անակնկալ և յուզիչ հանդիպումը Թորոսի հետ:

Դ. Արարուածին մէջ հայ և յոյն ընդհանրութիւն է, ուրտեղ Թորոսի յաղթանակին մէջ կը տեսնուի մատնիչ Խուժիկի կառափը:

Թէ՛ ողբերգութիւնը և թէ՛ զայն համեմոյ և կենդանացնող երգերը ամենամեծ խանդավառ գնահատութեան արժանացան ներկաներէն և երկար ծափահարուեցան:

Պարտք կը համարինք յայտարարել թէ աշակերտաց բեմական յաջող խաղարկութիւնը կը պարտինք Պրն. Հ. Բազարաւորին, տաղանդաւոր դերասանի ժիր ջանքերուն, ինչպէս արուեստագէտ Գ. Աւետիսեանի՝ երգի հրապուրիչ բաժինը:

Նոյնպէս շնորհակալութեամբ կը յիշենք անունները Պրն. Հ. Պայեանի, իր բեմադրի դերին մէջ. ինչպէս նաեւ յաջող դերասանները՝ Պրն. Հ. Եօրկանճեան և Պրն. Յովսէփ Ուրֆալի՝ Թորոս Բ. և գերեզմանապահի դերերուն մէջ, ինչպէս նաեւ աշակերտներէն՝ Տարոնեան, Խոճամիրեան, Ստ. Պողոսեան, Տապաղեան, Լուրիս Մատթէոսեան:

Յատուկ յիշատակութեան արժանի կը համարինք անունը իննամեայ Վարուժան Ուզունեանի՝ վարժարանի խոստմնալից աշակերտներէն մէկուն բեմական ասպարէզին մէջ:

Նոյնքան յաջողութեամբ բեմադրեց վարժարանիս փոքրիկներու դասը՝ մէկ արարով ֆրանսերէն ներկայացումը, հրապուրիչ թէ՛ երգերու զանազանութեամբ և թէ՛ փոքրիկ դերասաններուն շնորհալի և համարձակ խաղարկութեամբ:

Կ'արժէ յիշել անունները յաջողագոյններուն. Գր. Փափագեան, Հայկ Սողոմոնեան և Վ. Ուզունեան:

Յրանսերէնէն վերջ յաջողեցին քանի մը տեսարաններ իտալական երգերով մեծապէս յաջող, ինչպէս «Occhio di Falco», «l'Ortolano» և «I due gobbetti» զորս երգերին Գ. Փափագեան, Միհրան Մալումեան, Կարապետ Գազանճեան և Յակոբիկ Մովսէսեան:

Իբրեւ վերջաբան՝ բեմադրուեցաւ բարձրագոյն դասի աշակերտաց կողմէն «Բարեկենդանի անկուտիներ» զաւեշտը. ու ժողովուրդը մեկնեցաւ ուրախ և գոհունակ, սրտազին ուրախակցելով Տեսչութեան և տանելով հետը քաղցրագոյն տալուորութիւնը ազգային այս նուիրական տան՝ որ գիտէ կրթել հայ զաւակներուն հոգին ազգային և քաղաքակրթական բարձր գաղափարականով:

ՆԵՐԿԱՅ ՄԷ